ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ռուս-թուրքական պատերազմի վերաճումը թուրք-հայկական պատերազմի 1918 թվական

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Նունե Բաղրամյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Գորիսի 4 ավագ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Շալունց Գայանե

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

1. Ռուս-թուրքական պատերազմի վերաճումը թուրք-հայկական պատերազմի……4

2. Էրզրումի անկումը……..….9

3.Եզրակացություն……19

4.Գրականության ցանկ……20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Թեման ունի շատ մեծ դաստիարակչական նշանակություն: Սրանով հայ աշակերտը կստանա բարոյական, հոգեբանական ու ռազմահայրենասիրական հզոր լիցք, որը մեծապես կօգնի նրանց հայրենիքի ապագա պաշտպանի կայացմանը, բոլոր նրանց համար, ովքեր անտարբեր չեն իրենց երկրի, անցյալի, ներկայի ու ապագայի հանդեպ: Կան հերոսական դրվագներ, որտեղ պայքարը ավարտվում է հայկական զորքի պարտությամբ, կարող է գտնվեն մարդիկ, ովքեր երևույթի խորքը չտեսնելով պնդեն, որ հայ պատանին ապագա հայ զինվորը պետք է դաստիրակվի միայն հաղթանակներով: Այդպես մտածողներին կարելի է պատասխանել ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա Միշել դը Մոնտենի խոսքերով. «Եղել են պարտություններ, որոնք իրենց փառքով չեն զիջում խոշորագույն հաղթություններին»[1]:

Աշխատանքի նպատակը: Թեմայով կարելի է լիարժեք և ճիշտ պատկերացում կազմել արդի արցախյան պատերազմի մասին: Աշակերտը կկարողանա վերլուծի պատմական զարգացումների խորքային պատճառները, բացահայտի պատմական գործընթացների պատճառա-հետևանքային կապերը, առօրեական կյանքի առանձնահատկությունները, ձևավորի վերաբերմունք սեփական պետության, մշակույթի, պատմության և ապագայի տեսլականի:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու ենթավերնագրից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

[1] Ռ. Թաղևոսյան-Դրվագներ հայոց ռազմական պատմությունից 19-20 դարեր, էջ 11

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐԱՃՈՒՄԸ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

1918 թվականի հունվարի 30-ին (փետրվարի 12-ին) կովկասյան ռազմաճակատում թուրքական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մեհմեդ Վեհիբ Փաշան երրորդ բանակի զորքերին հրաման տվեց անցնել դեմարկացիոն գիծը:

Նույն օրը Թիֆլիսում Վեհիբ փաշայից հեռագիր ստացվեց, որում ասված էր, որ իր զորքերը հարձակման են անցնում և որ այն ռուսական զորքերի նկատմամբ թշնամական գործողություն չէ, այլ հետապնդում է հայերի բռնություններից մուսուլմաններին փրկելու նպատակը: Թուրքական զորքերը հարձակման անցան երեք ուղղություններով՝ Ախլաթի, Երզնկայի, Բաբերդի: Հարվածի հիմնական ուղղությունը Երզնկա-Էրզրում- Ալեքսանդրապոլ գիծն էր:Այս ուղղության վրա թուրքերի գլխավոր հարվածող ուժերն էին 1-ին բանակային կորպուսի կովկասյան 9-րդ և 36-րդ դիվիզիաները:

Երզնկայի մարտական հարվածի պաշտպանությունը դրված էր գնդապետ Մորելի ջոկատի վրա, որը ուներ նախկին ցարական բանակի 1200 սպա և մոտ 1000 հայ կամավոր՝ Սեբաստացի Մուրադի գլխավորությամբ:

Հենց սկզբից Երզնկայի ուղղությամբ իրադարձությունները հայերի համար աննպաստ դասավորվեցին: Թշնամու մի շարք գրոհներից հետո հայկական զորամասերը փետրվարի 13-ին հարկադրված էին նահանջել: Զինվորների հետ նահանջի ճանապարհը բռնեց 6000 գաղթական: Երզնկա քաղաքում մնացին մի քանի տասնյակ ծերեր, հիվանդներ, որոնք նախընտրել էին մեռնել իրենց ծննդվայրում, քան ցրտահարվել տառապալից նահանջի ճանանարհին[1]: Քարավանը Երզնկայից հազիվ 2 ժամվա տարածություն էր անցել, երբ թուրքական բանակը մտավ քաղաք: Թաքնված թուրքերը դուրս եկան իրենց թաքստոցներից և թափվեցին հայկական թաղերի վրա: Այնտեղ մնացածներին անգթորեն ոչնչացրին տեղնուտեղը, ապա սկսվեց թալանը: Բայց թուրքական բանակը տատանվում էր Երզնկայից առաջ շարժվել, որովհետև հետախուզությունը հայտնել էր ՝ ռուսական բանակի կողմից լքված ռազմական ողջ գույքը, բերդերն ու պաշտպանական մյուս ամրություններն անցել են հայերի ձեռքը:

Շատ չանցած՝թուրքական սպայակույտը ստացավ այլ գաղտնի տեղեկություն ևս, որի համաձայն՝ հայկական ուժերը թվով անբավավար են, խիստ անկազմակերպ: Դա շատ կարևոր էր թշնամու համար. այդ ուժերը պառակտված են ներքին անհամաձայնություններից:

Առաջխաղացող թուրքական բանակի ներքին կացութունն ուղղակի ողբալի էր: Զինվորները երկու տարուց ավելի հագուստ չէին ստացել, մերկ ու բոբիկ էին: Սննդամթերք ստանում էին դեպքից դեպք, ուստի ստիպված էին հաց հայայթել ընդունելի ու անընդունելի բոլոր միջոցներով: Այսպիսինն էր թուրքական բանակի պատկերը, երբ, Երզնկայից դուրս գալով, առաջ շարժվեց դեպի Էրզրում:

Այս պայմաններում է, որ 9-րդ զորաբաժնի հրամանատար Շևգը փաշան հեռագիր հղեց Վեհիբ փաշային.«Ի սեր Աստծո, ամեն միջոցով ջանացե՛ք բանակը հասցնել Մամախաթուն՝ հայերին թողնված անթիվ-անհամար ռազմական պաշարին տիրանալու համար»[2:]

Վանի ուղղությամբ հայկական զորքերը կատաղորեն դիմադրում էին թուրքական հարձակումերին: Կենաց և մահու գոտեմարտ մղող վանեցիները Կովկասից օգնություն էին սպասում, բայց այն չէր գալիս: Նրանք հատկապես հույս ունեին ստանալ Անդրկոկասում ապաստանած Վան-վասպուրականցիների աջակցությունը: Վերջիններս Թիֆլիսում և Երևանում կազմակերպել էին զինված ջոկատներ, սակայն ազգային իշխանությունների անկազմակերպվածության և ապաշնորհության պատճառով այդ ջոկատները տեղ հասցնել չէին կարողանում: Գործին խանգարում էին նաև միջկուսակցական հակասությունները, որոնք նույնիսկ այդ ծանր օրերին չէին մարվում և մեծապես վնասում էին ինքնապաշտպանության գործին:

6-րդ բանակային կորպուսի թուրքական զորամասերը (հիմնականում կովկասյան 37-րդ դիվիզիան), որը գործում էր Տրապիզոն-Բաթում ուղղություններով, փետրվարի 14-ին գրավեցին Բայբուրդը, որտեղից գաղթականությունը խուճապով ուղղություն վերցրեց դեպի Էրզրում: Այնուհետև թուրքական կորպուսի զորամասերը գրավեցին Տրապիզոնը: Վրացիները ոչ մի միջոց ձեռք չէին առել Տրապիզոնյան գիծը պաշտպանելու համար: Առանց որևէ դիմադրության հանդիպելու թուրքերն արագ

[2] «Պայքար»/ Բոստոն, 25 սեպտեմբերի.1927թ

գրավեցին նաև Տրապիզոնին հարող շրջաններն: Տրապոզոնի անկումից հետո տրապիզոնյան գծի պաշտպանությունը հայկական բանակի հրամանատարության համար դարձավ ամենամեծ մտահոգությունը, քանի որ թուրքերի կողմից այդ գծի ճեղքումը հայկական զորքերի համար մեծ սպառնալիք կստեղծեր թիկունքից: Էրզրումի ուղղությունում գործող թուրքական առաջին բանակային կորպուսի առաջատար զորամասերը, որոնք մտնում էին 36-րդ կովկասյան դիվիզիայի մեջ՝ շարունակելով հարձակումը գրավեցին Մամախաթունը:

Հերթը հասավ Աշկալային: Աշկալան պաշտպանող հայկական փոքրաթիվ ջոկատը ուժգին հարձակման ենթարկվեց մոտ 300 թուրք և քուրդ ձիավորների կողմից, որոնք փորձում էին շրջապատել նրան: Զգալով, որ չի կարողանալու դիմադրել, ջոկատը պատպանվելով Աշկալայից շարժվեց դեպի Կորչմա՝միանալով այստեղի հայկական ուժերին: Փետրվարի 14-ի առավոտյան հակառակորդի առաջավոր զորամասերը, մոտ 100 սվինով, երկու լեռնային հրանոթով և 300 հեծյալ քրդերով Աշկալայի կողմից գրոհեցին Կորչմայի դիրքեր: Այդ արագ հաղթանկաներից հետո թուրքական զորքերը շարժվեցին Էրզրումի վրա:

Այսպիսով ծանր պարտություններ կրելով՝ հայկական ուժերը մեկը մյուսի հետևից թշնամուն էին թողնում Արևմտահայաստանի ընդարձակ տարածքները: Նախկին փառավոր հաղթանակների ճանապարհները վերածվեցին տառապալից նահանջի ուղիների: Դրությունը սպառնալից էր, իսկ Անդրկովկասի կառավարությունը հեռու էր ըմբռնելու իրավիճակի ողջ ահավորությունը: Այսպիսի կառավարություն պետք է հանդիսանար Անդրկովկասյան պառլամենտը, որը բացվեց 1918 թվականի փետրվարի 10-ին և ստացավ Անդրկովկասյան Սեյմ անվանումը: Սեյմն ուներ 125 պատգամավոր: Պատգավորական մանդատները բաշխվեցին հետևյալ կերպ. 32 մեյնշևիկ, 30 մուսաղաթական, 27 դաշնակցական.19 էսէր, 7 պատգամավոր «Մուսուլմանական սոցիալիստական բլոկից» 3 ներկայացուցիչ «Մուսուլմանությունը Ռուսաստանում» կուսակցությունից, մեկ վրացական սոցիալիստ-ֆեդերալիստ,մեկ պատգամավոր ժողովրդական ազատության կուսակցությունից,մեկ վրացական նացիոնալ-դեմոկրատ:Սեյմի նախագահ ընտրվեց Ն. Չխեիձեն: Սեյմը հաստատեց անդկովկասի կառավարութուն, որը կազմված էր

երկրամասի գլխավոր ազգերի՝ հայերի,վրացիների և ադրբեջանցիների քաղաքական կուսակցությունների կողմից երաշխավորված ներկայացուցիչներից:

Ստեղծվել էր անտրամաբանական մի վիճակ.թուրքերի հետ կռվում էին հայկական զինված ուժերը իսկ Սեյմի կառավարության ռազմական նախարարը վրացի էր,պատերազմը տեղի էր ունենում հայկական հողերի վրա,բայվ ներքին և արտաքին նախարարները վրացիներ էին: Պատահական չեն որ Սեյմի՝ փետրվարի նիստում վրացիները և կովկասյան թաթարները քննարկման ներկայացրին Թուրքիայի հետ հաշտության պայմանները: Ըստ այդ փաստաթղթի Անդրկովկասը բավարարվում էր 1914 թվականի ռուս-թուրքական սահմանագծով, իսկ Թուրքահայաստանի համար պահանջվում էր «ինքնավարություն օսմանյան պետականության շրջանակներում»:

Վրացիների և կովկասյան թաթարների վարած այդ քաղաքականությունն ավերիչ ազդեցություն էր ունենում Անդրկովկասի հայակական միջավայրում: Արևելահայ շատ գործիչների մեջ այն համոզումն էր ձևավորվում, որ ավելորդ են Արևմտահայաստանի պաշտպանության համար թափվող ճիգերը: Գնալով ամրապնդվում էր այն կարծիքը, որ Արևմտահայաստանի պաշտպանությունն իրենց իսկ արևմտահայերի գործն է, իսկ արևելահայերը պետք է հոգան միայն Կովկասյան Հայաստանի պաշտպանության մասին: Նման տեսակետը տարածում էր ստանում այն պատճառով, որ Բրեստ-Լիտովսկի բանակցություններում թուրքական պատվիրակությունը խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը կեղծ խոստումներ էր տվել, թե օսմանյան զորքերը 1914 թվականի ռուս-թուրքական սամանին հասնելուց հետո կանգ են առելու և այլևս առաջ չեն գնալու: Այս տրամադրությունը թափանցում էր արևելահայության մարտունակ ուժերի մեջ, խաթարում հայ զինվորականների մարտական և բարոյական ոգին, քայքայում նրանց շարքերը: Նրանցից շատերը ցանկություն չէին դրսևորում մեկնել Կովկասյան ճակատ՝ թուրքերի հարձակումից Արևմտահայաստանը պաշտպանելու համար: Պատահական չէր,որ, ըստ էության, խափանվեց զորավար Թովմաս Նազարբեկյանի հրամանատարությամբ 64000-ոց հայկական բանակ ստեղծելու իրականացումը: Ձախողվեց նաև արևմտահայերից Անդրանիկի գլխավորությամբ 30- հազարանոց բանակի ստեղծման ծրագիրը: Վիճակը բարդանում էի նրանով,որ փոքրաթիվ հայ

ժողովուրդը չուներ միասնական ղեկավարություն: Այդ ծանրագույն պահին հանդես եկան մի քանի տերեր՝ բոլորն էլ ինքնիշխան: Դրանք էին՝ Ռուսահայ Ազգային խորհուրդը, որի կազմում կային մի քանի ուրիշ խորհուրդներ, Հայաստանի Ապահովության Խորհուրդը, որը ուներ ինքնուրույն մասնաճյուղեր, Ռուսահայ կերպուսի հրամանատարությունը, Հայաստանի Երկրապահ զորամասի հրամանատարությունը, Հայ Զինվորական Միությունը:

Հայերի ավանդական անմիաբանությունը քայքայում էր նրանց ազգային մարմինը: Ընդհանուր այն կարծիքը կար,որ թուրքերի առաջխաղացումը կկանգնեցվի Էրզրումի կողմերում: Այդ թելադրված էր այն իրողությամբ, որ հայերը զենքի և զինամթերքի հսկայական պաշարներ ունեն, իսկ Էրզրում և Կարս բերդաքաղաքները ահեղ և ուժեց ամրություններ էին, որոնց գրավումը դժվարին գործ էր: Բացի այդ դաշնակիցները դրական վերաբերմունք ունեին հայոց գործողություններին, իսկ Թուրքիան տարբեր ճակատներում արյունաքամ էր լիում: Այդ բոլորը, սակայն, նախադրյալներ էին, որ պետք է իրականության վերածվեին, իսկ դրա համար ամենից առաջ անհրաժեշտ էր ազգային միասնություն, մի բան, որ, ինչպես ասվեց, չկար:

Թուրքական հարձակումից անմիջապես հետո զորավար Թ. Նազարբեկյանը կարգադրեց անհապաղ Էրզրում ուղարկել կորպուսի առաջին և չորրորդ գնդերը: Միաժամանակ նոր նշանակումներ կատարեց. զորավար Արեշովն ուղարկվեց Ալեքսանդրապոլ, նրա տեղակալը՝ Էրզրում, գնդապետ Դավիթ Օսիպովը՝ Խնուս: Կարսի ամրոցի պարետ նշանակվեց գլխավոր շտաբից գեներալ-մայոր Դեևը, իսկ նրա մոտ կոմիսար՝ Միքայել Արզումանովը: Էրզրումի ամրոցային շրջանի պետ նշանակվեց Անդրանիկը:

Բասեն գավառի Քյուփրի-Քոյ հայկական մեծ գյուղում դիվիզիան բաժանվեց 2 մասի: Մի մասը Անդրանիկի գլխավորությամբ շարժվեց դեպի Էրզրում, իսկ մյուս մասն ուղղություն վերցրեց դեպի Խնուս՝ միանալու գնդապետ Սամարցևին: Իսկ քաղաքական հորիզոնում կատարվող դեպքերը, մեծ տերությունների դիվանագիտական խաղերն հանդես էին գալիս ի չիք դարձնելու այն ահռելի ճիգերը, որ հայ ժողովուրդը թափում էր իր հայրենի հողին տեր կանգնելու համար:Բրեստ-Լիտովսկի բանակցությունների առաջին փուլում քառյակ դաշինքի պետությունների ներկայացուցիչները առանց անեքսյաների և առանց ռազմատուգանքների՝ ռուսական

կողմի հաշտության առաջարկը ընդունել էին: Բայց հետագա բանակցությունների ժամանակ Գերմանիան հայտնել էր,որ Ռուսաստանից գրաված երկրամասերը թողնել չի կարող:

1918 թվականի հունվարի 28-ին (փետրվարի 10-ին), երբ նորից վերսկսվեցին բանակցությունները , բոլշևիկայն կառավարության կողմից ներկայացավ Տրոցկին ու հայտարարեց, որ իր պատվիրակությունը չի ստորագրի հաշտության պայմանագիրը, միաժամանակ տեղեկացրեց, որ իր կառավարությունը միակողմանիորեն դադարեցնում է պատերազմը Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Բուլղարիայի դեմ, ուստի և լիովին զորացրում է ճակատներում կռվող ռուսական բոլոր զորքերը:

Այս վերջնագրի ժամանակ Ռուսաստանը ոչ միայն զրկվում էր գերմանացիների և ավստրիացիների կողմից զավթած երկրամասերից, այլև Թուրքիայից գրավված վիլայեթներից: Ռուսաստանը Թուրքիային էր զիջում Կովկասի մի մասը՝ Բաթումիի, Արդահանի և Կարսի շրջանները, այսինքն վերականգնում էր ոչ թե մինչև 1914 թվականը, այլ 1877 թվականի պատերազմից առաջ եղած ռուս-թուրքական սահմանը: 1918 թվականի փետրվարի 18-ին /մարտի 3/ բոլշևիկյան ղեկավարներն իրենց ստորագրությունները դրեցին այս կողոպտչական վերջնագրի տակ:

ԷՐԶՐՈՒՄԻ ԱՆԿՈՒՄԸ

Երզնկայից Էրզրում նահանջած և բերդ-ամրոց քաղաքի պարետ նշանակված գնդապետ Մորելը շարունակում էր մնալ իր պաշտոնում: Նրա ենթակա կայազորը բաղկացած էր հայկական կորպուսի արևմտահայ երկրապահ դիվիզիայի զորամասերից: Ընդհանուր թվով 3500 սվին և սուր, 24 գնդացիր, լեռնային հրետանու 2 մարտկոց, բերդային հրետանակազմ, որին սպասարկում էր 440 զինվոր և սպա: Մորելի իրավասությունների ոլորտը ստույգ չէր սահմանազատվել գեներալ Անդրանիկի իրավունքներից: Շատ դեպքերում նրանց գործողությունները խաչաձևվում էին՝ ստեղծելով երկիշխանություն:

Էրզրումը փաստորեն գտնվում էր հայկական զորամասերի և վարչակազմի ենթակայության տակ:Այդ դրությունը ստեղծվել էր քաղաքից ռուսական զորքերի հեռանալուց հետո: Այդ զորքերը ենթարկվում էին կովկասյան ռուսական բանակի

գլխավոր հրամանատարությանը, որն իր հերթին ենթակա էր Կովկասյան Սեյմի գործադիր իշխանությանը: Իսկ Սեյմի վրաց ղեկավարությունը և Կովկասյան բանակի վրացի հրամանատարները հաշվի չէին առնում, թե Արևմտյան Հայաստանի տարածքներից նահանջելիս ինչպիսի ահավոր իրավիճակ կստեղծվի այնտեղ վերադարձած հայության բեկորների համար: Ավելին՝ վրացի հրամանատարների թվում քիչ չէին բացահայտ հայատյացները, որոնցից էր զորավար Օդիշելիձեն, որը, ինչպես պարզվեց, գաղտնի բանակցությունների մեջ էր մտել թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշայի հետ:

Էրզրումի հյուսիս-արևմտյան մասը տեղական քրդերի ու թուրքերի հրոսակախմբերից մաքրելու նպատակով բերդաքաղաքի հետևակային գնդից առանձնացվեց մի ջոկատ, որի կազմում էին 250 սվին, 80 հեծյալ, 4 գնդացիր, 2 լեռնային հրանոթ: Ջոկատի հրամանատար նշանակվեց Պորուչիկ Մելիք-Միրզախանովը: Նրա ջոկատը ամրոցից դուրս եկավ փետրվարի 19-ին և հարձակում գործեց նշանակված շրջանի հրոսակախմբերի վրա: 4 օրվա ընթացքում ջոկատը իրեն նշանակված շրջանի մի մասը,մինչև Արզիկ-Թուսիկ-Ուրթուզի-Իգդասուր-Խաչկիվանք-Արզիթի-Դինար-Կում գիծը ամբողջովին մաքրեց հակառակորդի ջոկատներից: Մելիք-Միրզախանովի ջոկատի գործողությունները կարևոր նշանակություն ունեցան Էրզրումի ընդհանուր պաշտպանության համար և հատկապես ամրացրին Իլիջայի խմբավորման աջ թևն ու թիկունքը: Փետրվարի 20-ին Անդրանիկը կարգադրեց հանրահավաքի հրավիրել բերդաքաղաքում գտնվող զինվորներին և հայ բնակչությանը: Դիմելով զինվորներին՝ նշեց, որ Էրզրումը հայության տան դուռն է, և եթե թշնամուն հաջողվի այդ դռնից ներս մտնել, ապա Հայաստանը կործանված պիտի տեսնել: Այս ճշմարտությունը չէին ըմբռնում շատերը, որոնք պատրաստ էին թշնամուն հաձնել Էրզրումի հռչակավոր ամրությունները: Անդրանիկի Էրզրում գալը քաղաքի պաշտպանության մասնակիցներից շատերին հավատ ներշնչեց, որ իր վիթխարի հեղինակությամբ նրան կհաջողվի բարձրացնել զորքերի մարտական ոգին, որպեսզի նրանք ոչ միայն պաշտպանեն ամրոց քաղաքը, այլև ետ վերադարձնեն ռազմաճակատի կորցրած մասը: Այս հույսերի համար հիմք էին ծառայում Անդրանիկի անձնական հատկությունները, հայրենիքի հանդեպ նրա անսահման սերը և նվիրվածությունը,

որը թվում էր՝ ընդունակ էր զինվորների ու սպաների մեջ բոցավառելու մարած պարտքի ու առաքինության զգացումը: Հայ ժողովրդին հայտնի էին նրա համարձակությունը, երկաթյա վճռականությունն ու համառությունը, անձնական օրինակով մյուսներին կենդանի գործի մեջ ներգրավելու կարողությունը, մարտական մեծ փորձը, թշնամուն ճանաչելու ունակությունը, խոսքի շնորհքը և,վերջապես,բոլոր հայերի շրջանում նրա հսկայական ժողովրդականությունը, առաքինի ու արժանավոր ժողովրդական հերոսի նրա փառքը:

Փետրվարի լույս 22-ի գիշերը մեկ այլ ջոկատ, որի կազմի մեջ էին Էրզրումի առաջին հրաձգային գնդի 2 վաշտերրը՝ 2 գնդացիրներով և 2 լեռնային հրանոթներով, 50 թրից բաղկացած հեծելազորը: Կապիտան Ստոյակինի գլխավորությամբ հեծելազորը, բերդաքաղաքից դուրս գալով, հասավ Իլիջա: Դա ջոկատի Իլիջայում մնացած հիմնական ուժերին հնարավորություն էր տալիս ապահով լինել աջ թևից: Իլիջայի մոտ գործող ջոկատին օգնելու համար Թուրքիդարասիից Մուզդուլուք ուղարկված 4-րդ հրաձգային գնդի վաշտերից մեկը նույն այդ պահին կանգնեցվեց ուժեղ կրակոցով: Վաշտը վերադարձավ՝ չկատարելով իր առաջադրանքը: Մի քանի վաշտեր, կենտրոնացնելով Ալաջա գյուղի մոտ, հակառակորդը փետրվարի 23-ի առավոտից շարժվեց Արամջիկի ուղղությամբ: Փետրավարի 24-ին սկսվեցին ծավալվել դրամատիկ իրադարձություններ: Թուքերը զգալի ուժեր կենտրոնացրին Թաքիդարասիի և Իլիջայի ջոկատների դեմ և շուտով հարձակման անցան: Բեյբուրդի և Մամախաթունի կողմից Էրզրումի պաշտպանությունը ապահով դարձնելու նպատակով Կորչմա գյուղի մոտ Էրզրում-Բայբուրդ և Էրզրում-Մամախաթում ռազմական նշանակություն ունեցող ճանապարհների հանգույցում դիրքեր գրավեց կապիտան Ստոյակինի ջոկատը: Փետրվարի 24-ի երեկոյան հրաձգային գնդի վաշտերի զինվորները, որոնք դիրքեր էին գրավել Իլիջա գյուղի մետ հայտարարեցին, որ այլևս մտադիր չեն մնալ դիրքերում և 1-2 ժամ հետո շարժվելու են Էրզրում: Անդրանիկի բոլոր հորդորները ոչ մի արդյունք չտվեցին,և միայն գնդի նախկին հրամանատար գնդապետ Բեժամբեկին մի կերպ հաջողվեց զինվորներին համոզել,որպեսզի նրանք չլքեն դիրքերը:

Փետրվարի 23-24-ի իրադարձությունները խորացրին Անդրանիկի տագնապները:Էրզրումի պաշտպանները պատերազմի առաջին տարիների

զինվորները չեն: Նրան հոգնած էին անընդհատ երթերից, հիասթափված պարտություններից, տանջվում էին հարազատ վայրերի և ընտանիքների կորստից: Փետրվարի 25-ի առավոտյան Վեհիբ փաշան նամակ ուղարկեց Էրզրում՝ Անդրանիկին, որը ստացվեց կեսօրին:

«Անդրանիկ փաշային և Կարնո հայ մեծամեծերին»:

Օսմանյան բանակի բոլոր հաղթական ԳՕԼ ՕՐՏՈՒՆԵՐԸ (զորքերը):Շարժման մեջ են դրված գրավելու համար մեր հայրենի հողերը :Ռուսական դեմոկրատիկ հանրապետության ներկայացուցիչները ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿՈՒՄ մեզ են հանձնել մեր իսկ հողամասերը եղող Բաթումը,Կարսը, Արդահանը,Օլթին և Արդվինը: Հետևապես, ձեզ առաջարկում եմ անմիջապես հեռանալ մեր սահմաններից այլապես օրենքի ուժով կպատժվեք խստորեն:Շուտով մեր զորքերը ափ են իջնելու Բաթումում և շարժվելու են դեպի Կարս:

Օսմանյան Գոլ օրտուների հրամանատար՝ Վեհիպ»[3]:

Ստանալով Վեհիբ փաշայի այս սպառնալի նամակը, Անդրանիկի կարգադրությամբ Վահան Թոթովենցը հետևյալ պատասխանը գրեց, որը ուղարկվեց նույն սուրհանդակի միջոցով.

«Օսմ. Գոլ Օրտուների հրամանատար Վեհիբ փաշային

Այն նույն ռուսական դեմոկրատական հանրապետությունը, որ Բրեստ-Լիտովսկում ձեզ է տվել Բաթումը և Կարսը, մեզ էլ զենք, ռազմամթերք և ամեն տեսակի միջոցներ է տվել պաշտպանելու համար մեր անժխտելի հայրենիքը հանդիսացող Կարսը,Կարինը,Վանը, Բիթլիսը և մնացած այն 4 նահանգները, որոնք տակավին հեծեծում են ձեր բռնակալության տակ: Ռուսական դեմոկրատական հանրապետությունը մեզ տվել է ինքնորոշվելու պատեհություն, և մենք այստեղ ենք եկել ինքնորոշվելու: Թե որի՞նն է այս հողը՝ ձե՞րը, թե մերը զենքի ուժը պետք է որոշի: Մենք պատրաստ ենք կռվի:

Հայաստանի երկրապահ զորամասի հրամանատար,գեներալ-մայոր՝ ԱՆԴՐԱՆԻԿ»[4]:

---

[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370,ց.1,գ.41,թ.14

[4] Արսեն Մարմարյան, Զորավար Անդրանիկ և իր պատերազմները, Պոլիս, էջ357

Ճիշտ կլիներ, եթե Անդանիկը, հաշվի առնելով ստեղծված ծանր կացությունը, մասնավորապես հայկական զորքերի արագ քայքայման ընթացքի, անպատասխան թողներ Վեհիբ փաշայի նամակը: Բայց բանն այն է, որ նա չէր կորցրել հույսը, թե հայ զինվորների մեծ մասը կկռվի ինչպես պետք է: Ինչ խոսք, նա սխալ գնահատեց իրավիճակը՝ դրանից բխող բոլոր տխուր հետևանքներով հանդերձ: Փետրվարի 25-ի կեսօրին թուրքերը սկսեցին ընդհանուր հարձակում: Հայկական շարքերը երերացին, ապա ճակատը լքողների թիվը գնալով ժամ առ ժամ մեծացավ: Հենց այդ պահին Անդրանիկը Թիֆլիսից՝ Հայաստանի Ապահովության Խորհրդից, ստացավ հեռագիր, որտեղ ասված էր, որ Տրապիզոնում գումարվում է թուրքական և կովկասյան ազգությունների խաղաղության համաժողով: Հեռագրով Անդրանիկին հարցում էր արված, թե թուրքահայերը պիտի մասնակցե՞ն արդյոք Տրապիզոնի բանակցություններին, թե՞ ոչ:

Նա պատասխանեց,որ թուրքահայերը չպետք է գնան Տրապիզոն, իսկ եթե որևէ մեկին ուղարկելու լինեն այնտեղ, ապա նա պետք է համաժողովին ներկայանա անպաշտոն կերպով՝ միայն նպատակ ունենալով շոշափել թուրքերի տրամադրությունը: Նա գտնում էր, որ եթե ռուսահայերը նույնիսկ հաշտվեն թուրքերի հետ, ապա միևնույն է, վերջիններս շարունակելու են կռիվը թուրքահայերի դեմ: Ուստի ոչ ոք լիազորություն չպետք է ունենար թուրքահայ ժողովրդի անունից թուրքերի հետ խաղաղության այլ տեսակի դաշինք ստորագրելուն: Նրանք վախ ունեին, որ օսմանցիները կարող էին ռուսահայերին ստիպել ստորագրելու այնպիսի պայմանագիր, որն անտեսեր Թուրքահայաստանի հարցը, դրանով իսկ թուրքահայ դատը զոհ բերվեր «խաղաղության հաստատմանը»: Արևելահայ պատգամավորները Տրապիզոն մեկնեցին, երբ Վեհիբ փաշան արդեն սկսել էր հարձակում Էրզրում բերդաքաղաքի վրա:

Թուրքական կանոնավոր զորամասերը կանգ առան Իլիջա,Արջիկ և Գյոզ գյուղերում, իսկ տեղացի թուրքերն ու քրդերը տեղավորվեցին դրանք թևերում՝ Արզ-Չիֆտլիք-Թութչի գծի վրա:

Դեպի բերդաքաղաք նահանջող զորքերը հոգեկան ծանր վիճակի մեջ էին:Զինվորները կռվում էին դժկամությամբ, քանի որ նրանց համակել էին բարոյական թուլությունը և անկումային տրամադրությունները: Նրանք գիտեին, որ

թիկունքը պահեստային ուժեր չունի: Այնտեղից որևէ օգնություն ստանալու հույս չկա: Թիկունքի բոլոր կենտրոններից և հատկապես Թիֆլիսից գալիս էին պարտվողական նվնվոցներ, թուրքերի դեմ այլևս անհուսալի է կռվելը: Հետևաբար ավելորդ է մնալ խրամատներում և աննպատակ զոհեր տալ:

Հակառակորդի հիմնական ուժերը բերդաքաղաք էին գալիս Մամախաթունի կողմից՝ առաջին բանակային կորպուսի 36-րդ դիվիզիայի կազմից մոտ 2 հետևակային գունդ: Հետախուզությունը պարզեց նաև, որ Էրզրումի արևմտյան ճակատի վրա թշնամին կենտրոնացրել է շուրջ 3000 սվին, 10-ից ավելի գնդացիր,12 լեռնային հրանոթ, 400-500 սուվարի և մոտ 2000 քուրդ ու տեղացի թուրք:

Հակառակորդի զորքերի դեմ Էրզրումի ամրոցը ուներ հետևյալ ուժերը. 2,5 հազար սվին, 300 հեծյալ, 24 գնդացիր, 8 լեռնային և 20 դաշտային հրանոթ չհաշված ամրոցների և բերդապարիսպների հրետանային ուժը առնվազն 20 թնդանոթ: Բացի այդ թիկունքից Էրզրում էր հասել 4-րդ գնդի 3-րդ գումարտակը՝ 300 սվին կազմով: Այս պատկառելի ուժերը, հենվելով այնպիսի զորեղ ու հուսալի ամրոցի վրա, ինչպիսին Էրզրումի բերդն էր, հսկայական ռազմական պաշարով և 4 ամսվա պարենամթերքով գրեթե անմատչելի բնական պայմաններով, անշուշտ, կարող էին ոչ միայն կասեցնել հակառակորդի հարձակումը, այլև հետ շպրտել նրան: Բայց բերդաքաղաքի զորքի մեջ բացակայում էր դիմադրության ոգին, կռվելու այնպիսի պատրաստակամությունը, որը նույնիսկ ավելի թույլ ջոկատներին հնարավորություն է ընձեռում,որ գտնվելով ավելի վատթար պայմանների մեջ, չափվել անհամեմատ ուժեղ թշնամու հետ ու հաղթել նրան:

Փետրվարի 26-ին Անդրանիկը հրավիրեց զիվորական խորհրդակցություն, որին ներկա էին բերդ-ամրոց քաղաքի պարետը, շտաբի պետ գնդապետ Զինկևիչը, հրետանու պետ գնդապես Դոլուխանովը, գլխավոր կոմիսարի օգնական Զավրիևը, ինչպես նաև բերդի հրետանու հրամանատար փոխգնդապետ Տղերդոխլեբովը, սակայն նա չկարողացավ ներկայանալ: Երզնկայի գնդին առաջարկվեց զբաղեցնել բերդին մերձակա ամրոցները, ինչպես նաև բերդապարսպի հարավ-արևելյան մասերը և պահակներ կարգել՝քաղաքում հնարավոր տեղական ապստամբությունները կանխելու համար: Երզնկացիների մի վաշտ զբաղեցնում էին բերդի հարավարևմտյան ճակատի ամրոցներն ու ամրությունները, իսկ մեկ այլ վաշտ

միանալով դասալիքներին հեռացել էր բերդից: Էրզրումի գնդին հրամայվեց զբաղեցնել բերդապարսպի հյուսիս-արևմտյան մասը՝ Խարբութի, Տրապիզոնի և Օլթիի դարպասների հենակետերով հանդերձ:

Էրզրումցիների մյուս վաշտերը, կապի խախտման հետևանքով ժամանակին չստանլով հյուսիս-արևմտյան ճակատամաս նահանջելու վերաբերյալ կարգադրությունը, ետ քաշվեցին Քան գյուղից, երբ ճակատամարտը արդեն բորբոքվել էր հենց բերդաքաղաքի մոտակայքում: Վերջապահ զորքերին պաշտպանելու համար առանձնացվել էին Մուրադի 40 հեծյալները, որոնք այդ պահին զբաղեցնում էին Կարսի դարպասների հողապատնեշները: Փետրվարի 27-ի առավոտյան թուրքերը գրեթե միաժամանակ գրոհեցին բերդի Տրապիզոնյան և Խարբերդի դարպասները՝ դրանց վրա նետելով 2-ական գումարտակ:

Փետրվարի 27-ի երեկոյան Էրզրումը փաստորեն թուրքերի ձեռքին էր, չնայած բոլոր ջանքերին, ռուսահայ զինվորը հրաժարվում էր կռվել՝ չենթարկվելով պետերի հրամաններին:

Կարնո աղետ մասին խոսելով՝ Սիմոն Վրացյանը գրում է.

«1918թ. Փետրվարի 27-ին ամենախայտառակ ձևով ընկավ Էրզրումը... Այդ օրերում, Թիֆլիսի մեջ, հատուկ տիպեր ստեղծուել մի բաժակ թէյ-երով ռազմաճակատը պաշտպանողների: Կոչեր հրատարակողներ,ամեն տեսակ կօմիտէներ, խորհուրդներ, միություններ, խմբեր ու գումարտակներ Թիֆլիսում ավելի շատ էին, քան զորամասեր ռազմաճակատում Վանից մինչև Երզնկա»:

«Այս պայմաններու մէջ Անդրանիկի տեղ Նափոլէոն Պոնափարթն անգամ ըլլար հայ բանակին գլուխ, հավանականօրէն պիտի չկարենար փրկչի դեր խաղալ, պաշտպանել հայող բերդաքաղաքը-ո՛չ Երզրումը եվ ո՛չ ալ Կարսը,- պիտի յայտարէր ետագային,Միքայել Վարանդեան»[5]:

Օրակարգում էր հայության լինել չլինելու հարցը շատերը ցավով ու ափսոսանքավ ասում էին, որ ՄԵՐ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԸ Էրզրումը պատերի տակ պետք է լիներ, բայց արդեն ուշ էր...Էրգիրը եւս մեկ անգամ հայաթափվեց ու հանձնվեց օսմանցուն:

5

Էրզրումի բերդը,որի մոտ 400 թնդանոթները 1918թ.-ի փետրվարին լռեցին, թեև կարող էին գլխովին ոչնչացնել վախվորած հարձակման անցած թշնամուն: Ա՛վաղ...մենք նախընտրեցինք նահանջը»...

Փետրվարի 28-ի վերջին արյունհեղ ընդհանրումները տեղի ունեցան քաղաքի ծայրամասերում: Ժողովրդի նահանջը տեղի էր ունենում խիստ դանդաղ, նրանց ապահովության խնդիրը դրվել էր Մուրատի և Սարգիս Ջեբեջյանի ջոկատների վրա: Թուրքական զորքն ու խուժանը նորից գրոհեցին՝ թիրախ ընտրելով բերդի 2 դռները՝ Խարբերդյանը և Տրապիզոնյանը: Թշնամին գալիս էր մեծ թվով,սպառազեն և վստահ իր հաղթանակի նկատմամբ: Հայտնվեց Անդրանիկը: Պարտիզանական կռիվների աննման ու ինքնակամ մարտիկը պարզապես շշմել էր մեծամասշտաբ ճակատամարտի թոհուբոհի մեջ: Ականատեսը գրել է.

«Փաշան՝ իր հրաշեկ նժույգի վրա թևամբարձ, սուրը ձեռքին, թռավ ու անցավ զինվորներուն առջև, նոցա կախարդող իր անմեկնելի խիզախություններով առաջնորդելով բանակը կրակի մեջ»[6]:

Լքված հրանոթների մեծ մասը բացառությամբ հեռահար հրանոթների, որոնք ծածկվել էին ձյունով շարքից հանվեց: Ռազմամթերքի պահեստները, որ Անդրանիկի հրամանով պայթեցման էին նախապատրաստվել գնդապետ Դոլուխանովի կողմից չպայթեցին,վառիչ պետարդները չգործեցին: Կրակի տված ինժիներական պահեստներն ու շինությունները գրեթե անվնաս ընկան թշնամու ձեռքը: Էրզրումի պահեստներում կային մեծ քանակությամբ ավտոմեքենաների դողեր: Գերմանացիները թուրքերին հրահանգել էին անպայման գրավել իրենց համար չափազանց կարևոր այդ ապրանքը: Էրզրումի հայկական իշխանությունները պահեստներից հավաքել և կայարաններ էին ուղարկել դողերը, բայց անկազմակերպվածության պատճառով դրանք 5 օր մնացել էին կայարանում: Թուրքերը կարողացեկ էին կաշառել վրացի մեքենավարներին, որոնք փչացրել էին շոգեքարշերը,դրանով իսկ խափանել դողերի Կովկաս տեղափոխումը:

Եվ այսպես, ամրակուռ Էրզրում բերդաքաղաքը անցավ դարավոր թշնամու ձեռքը: Հայկական վերջապահ զորքերին իրենց կրակով հետապնդում էին միայն տեղացի մուսուլմանները, իսկ թուրքական կանոնավոր զորքերը բերդից այն կողմ

[6] ՀՀ, ՊԿՊԱ, ֆ.370,ց.1,գ.19,թ.1

չանցան: Նրանք սահմանափակվեցին բերդաքաղքի գրավումով և թալանի մոլուցքվ տարված «կարգ ու կանոն էին» հաստատում այնտեղ: Էրզրումի անկումից հետո Արևմտահայաստանի բոլոր գավառներից՝ շուրջ 140000 մարդ, պոկվեցին իրենց տեղերից և սկսվեց տառապալից նոր գաղթ: Փախստական քարավանները ուղղություն վերցրեցին մի քանի գծերով.Սարիղամիշ-Կարս-Ալեքսանդրապոլ, Ալաշկերտ-Կաղզվան, Դութաղ-Ղարաքիլիսա-Իգդիր, Բերկրի-Արծափ-Իգդիր-Երևան, Սարայ-Կոթուր-Սալմաստ:

Էրզրումում հայոց պարտությունը դառն էր ու անբուժելի: Դա կանխորոշեց հայակական զինված ուժերի հետագա անհաջողությունները և կրելիք ծանր կորուստները, որոնք վերջին հաշվով հայ ժողովրդին կանգնեցրի լինել-չլինելու հրամայականի առջև: Անդրանիկն ապրում էր հոգեկան մեծ ողբերգություն: Անձնական մեղքի զգացումը նրա մոտ միախառնվել էր Թիֆլիսի ազգային իշխանությունների նկատմամբ լեռնացող զայրույթի հետ: Ավետիս Ահարոնյանը գրել է. «Ինչպե՞ս մեղադրել Անդրանիկին, Էրզրումն ընկավ, չէր կարող դիմանալ.մեղքն Անդրանիկինը չէ: Թող մասնագետներն ասեն, թե ինչո՞ւ ընկավ. թող պատմությունը դատի: Անդրանիկը փորձեց պահ մը իր ներքին կրակով վառել փոքաթիվ, հոգեպես թուլացած, անկազմակերպ հայ բանակը Էրզրումի տակ.փորձեց հրաշք կատարել.մեկ խոյանքով ոտքի հանել նույնիսկ մեռելները և փշրել թշնամու կատաղությունը…Բայց նա չկարողացավ փրկել դրությունը»[7]:

Էրզրումում հայկական զորքերի անփառունակ պարտությունը Անդրանիկի հակառակորդներն օգտագործում էին նրան մեղադրելով բազում մեղքերի մեջ: Զորավարին մեղադրում էին այն բանում, որ Էրզրումի պաշտպանության օրերին նա գործը վարել է ֆիդայական եղանակով: Այս մեղադրանքը հատկապես գալիս էր գնտապետ Բեժանբեկովից և Բոլուխանովից: Անդրանիկը նշում էր, որ փետրվարի 25-ին ինքը առաջին գունդը հանձնել է Բեժանբեկովի ղեկավարությանը: «Փետրվարի 26-ին,-գրում էր նա,-գունդը առանց կռվելու Իլիջայից փախավ մինչև Կառնո Տրապիզոնի բերդադռան տախտակաշեն տուներուն մոտ» [8] ՝ Իլիջայում թողնելով մեծ քանակությամբ ռումբեր, փամփուշտներ և այլ զինամթերք: Բայց բերդադռան մոտ էի գունդը դիրք չբռնեց և այնտեղից խուճապով նահանջեց Կեղ գյուղը: Այս է եղել

[7] Ա. Ահարոնեան, Ժողովածու երկերի, հ.5,էջ421
[8] «Հայկաշեն», N 5, 1918, էջ 167

իրական պատմությունը, գրում էր Անդրանիկը: Բեժամբեկովը «ուզած է ապացուանել, թե այյլևս ինքը չէ այն մարդը, որ այս պատերազմի մեջ ապիկար դուրս եկած է՝ Իլիճայի մոտ 100-ավոր զինվորներու իզուր տեղը գերեզմանուելուն պատճառ դարձող,և երկրորդ, ուզած է ցույց տալ,որ զինվորական խորհուրդն իր դեմ կայացուցած վճռին բարոյական հարվածը չի զգացած»[9]:

Էրզրումի անկումից հետո հայության համար ստեղծվել էր երկու նոր ճակատ՝ դրանցից մեկը՝ Սարիղամիշի, մյուսը՝ Վանի ճակատներն էին:

[9] «Հայկաշեն», N 5, 1918, էջ 167

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գերարագ զարգացող և փոփոխվող աշխարհը իր հետ առաջ է բերում նորանոր խնդիրներ և մարտահրավերներ, որոնց պետք է շատ արագ հարմարվել: Այստեղ հատկապես կարևորում է ուսումնական գործընթացների ճիշտ կազմակերպումը: Այսպիսով, դիտարկելով « Ռուս-թուրքական պատերազմի վերաճումը թուրք-հայկական պատերազմի» թեման, հասկանում ենք, որ սրա դասավանդումը գնալով ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում հանրակրթական դպրոցներում: Նյութը ուսումնասիրելու ընթացքում կապված թեմայի առանձնահատկության հետ ցանկացել եմ սովորողների մոտ դաստիարակել և զարգացնել խոր հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության և ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն: Թեմայի դասավանդումը հնարավորություն կտա զարգացնելու սովորողների վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողությունը, հետազոտական հմտություններն ու կարողությունները:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հրաչիկ Սիմոնյան- «Անդրանիկի ժամանակը»-Երևան, «Կաիսա», 1966թ. Գիրք Բ

2. Ռաֆայել Թադևոսյան- Դրվագներ հայոց ռազմական պատմությունից, 19-20 դարեր, Երևան, «Զանգակ», 2012թ.

3.Ա. Մելքոնյան, Պ. Չոբանյան- Հայոց պատմություն, դասագիրք, 11 դասարան, Երևան, «Զանգակ», 2022թ.

4. Հայոց պատմության չափորոշիչ և ծրագիր- https://escs.am/files/files/2022-12-08/95bc8c3b2193ab87da47a90c00aba231.pdf

5.https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

6. http://zham.ru/categories/heritage/1616--.html